

գալիս էին Կիրասունի և Օրգուի գավառակների բնակիչները:

Բուլանճըքում ընկավում էր շուրջ 45 առն հայ, մեծ մասը սեփականատերեր: Ունեին փայտաշեն դպրոց:

10. ՕՐԴՈՒԻ ԳԱՎԱՌԱԿ

Օրգուն (Գոթորիա) Կիրասունից 77, Տրապիզոնից 167 կմ արեմուտք ընկած ծովափնյա քաղաք էր, հիմնված պառամական Գոթորիա քաղաքի վտյորում: Մ. Բժշկյանը այս քաղաքի մասին գրում է, որ՝ «Առաջ հոս ընկալություն չկար. մեր օրը ձեռամբ Մահտեսի Ավետիք Տրապիզոնցի իշխանին՝ ընկալություն չինվեցավ ամենայն աղագաց: Օրգուին լեռան վրա հին բերդին ավերակը կերեա. ուր երկաթյա գուռ կա, որ շաա սանդուխքով վար կիշնի մինչև գեար»⁴⁷:

Քաղաքի արեւելյան եզերքին ծով թափվող Բոքլի-տերե փոքր գետի ջուրը ամռանը չորանում էր, ջրաղտցները չէին աշխատում: Նրանցից մի ժամ արեւելք գտնվում է Զիվլի կամ Մեկեթի գետը: Քաղաքի տները տարածված էին Բոգ-թեփե լեռան լանջերին ու հարավարեւելյան սառորտներին:

1908 թ. պաշտոնական ավալներով գավառում ընկավում էր 130.800 մարդ, որից 103.16-ը Ռուրք, մահմեդական վրացի, չերքեզ, լալ, հուլն ու պարսիկ էին, 17069-ը՝ քրիստոնյա հուլն, իսկ 10.315-ը՝ քրիստոնյա հայ: 1911 թ. Օրգու քաղաքում ապրում էր շուրջ 3000 հայ⁴⁸: Օրգու քաղաքի հայերի զգալի մասը զաղթել էր Թամաշարայից, Շապին-Գարահիսարից և Կիրասունից: Վերջին աստիճաններին զգալի թիվ էին կաղմում շրջակա գյուղերից քաղաք փոխադրվողները:

Հայերը ակնառու աեղ էին գրավում քաղաքի տնտեսական կյանքում: Արհեստավորների մեծամասնությունը հայ էր: Կային մասնագետ հացագործներ, պղնձագործներ, թիթեղագործներ, կոշկակարներ, ոսկերիչներ, երկաթագործներ, ասաղձագործներ, որմնագիրներ և այլն: Ուստայանկությունը համարյա հայերի մենաշնորհն էր: Գործում էին ամեն անասկի կտավեղեն, երեսուրիչներ, բաղնիքի խավիկեղեն, պեմբակ (փեշափաշ): Զինորսությունը սղամարդկանց սիրած զրադմունքն էր: Զանասեր արհեստավոր լինելու շնորհիվ Օրգուի հայերը մեծ մասամբ բարեկեցիկ կյանք էին վարում: Քաղաքի առեսուրը գտնվում

Գյուղի ս. Նիկողայոս եկեղեցին հնուց մնացած, քար ու կրով կառուցված շենք էր:

Պազար-սուլի (Սալդունա): Երեք ժամ Բուլանճըքից արեւելք գտնվող այս գյուղն ուներ 25—30 առն հայ ընկալություն, որոնք բոլորն էլ մարարաններ էին:

Էր երկու մրցակից աղղությունների՝ հայերի և հուլների ձեռքին:

XIX դ. վերջերին Օրգուի շրջանի հայ գյուղացիները, Տրապիզոնի ու Կիրասունի շրջաններից բերելով կաղինի սունկեր, այս կողմերում հիմք են դնում կաղինի (կաղնու) մշակությունը: Այդ եկամտարեւր պտուղը արաասովոր արագությունը առարածվում է գավառակի շաա գյուղերում: 1900-ական թվականներին կաղնուներն այնքան շատացան, որ կաղինը դարձավ շրջանի արաահանվող առաջին ապրանքներից մեկն ու ժողովրդի հարստության գլխավոր աղբյուրը:

Օրգու քաղաքի տնտեսական կյանքն ակնառու վերելք է ապրում առանձնապես 1880-ական թվականներից հետո՝ Օրգու—Աեբասաիա խճուղու կառուցման շնորհիվ: Այդ ժամանակվանից, հատկապես 1908 թ. զգալիորեն ավելանում է Աեբասաիայի նահանգից Օրգու տեղափոխվող հայերի թիվը:

Օրգուն ուներ 6-ամյա երկսեռ դպրոց և եռամյա մանկապարտեղ, որանդ սովորում էր շուրջ 600 երեխա ու պաաանի: Աղջիկների դասարանը աղաներից առանձին էր՝ նույն շենքի երրորդ հարկում: Դպրոցն ուներ 17 ուսուցիչ, շուրջ 1000 ոսկի բյուջե, որից 50 ոսկին դպրոցին կից կտգնուտից սաացված եկամուտն էր, 100-ը՝ եկեղեցին էր վճարում, իսկ մնացածը աշակերաններից դանձվող ուսման վարձն էր:

Օրգուի հայ բողոքականներն ունեին իրենց դպրոցը՝ շուրջ 60 աշակերտով ու փորձառու ուսուցիչներով: Օրգուի ս. Միսակ եկեղեցին հիմնրվել է 1834 թ.:

Ընդ-թեփե Օրգուին մերձակա՝ հայերի առաջին ու գլխավոր ընկալվայրն էր: Քաղաքի ցածրագիր թաղերի ընկալիչներից շաաերի համար ամառանոցային վայր էր: Տարիների ընթացքում զգալի թվով հայեր հասաաավել էին նաե Օրգու քաղաքի Զեյթուն-մահալեսի, Աարայ-մահալեսի, Տաղպալը և այլ թաղերում:

1850-ական թվականներից Բոգ-թեփեում ապրող շուրջ 150 առն հայերն ունեին «Մովսեսայան» կոչված դպրոցը:

Համշենից ու Սե-գեաից զաղթած համշենա-

⁴⁷ Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 53:

⁴⁸ Աեբասաիա (Հ. Հովակիմյան), աշխ. աշխ., էջ 48—49:

Հայերի մի ղզալի հատված հանդրվանել էր Օրդու պալատակի լեռնային մասերում: Տեղի թուրք կալվածատերերը սիրահոժար թուլլատրում էին աշխատասեր համշենհայերին րնակվելու ան- ժայրածիր լեռնածածկ հողամասերում: Համշենցի շինականները դառնում են թուրք հողատերերի իրավագուրկ մարարաններ: Տարիների ընթացքում կալվածատերերի միայն շնչին մասը համաձայ- նեց իրենց հողամասերից ծախել հայ մարարա- ներին: Նրանց ձեռնառու չէր զրկվել մշտական եկամտի տղրյուրից: Այդ էր պատճառը, որ Օր- դու պալատակում տպրող համշենհայերի մեծ- մասնուկյունը մինչև Մեծ եղեռնը այդպես էլ մնացել էին իրավագուրկ մարարաններ:

Շրջանի 68 հայկական գյուղերն ու րնակա- վայրերը, մեծ մասամբ անխառն, դուտ հայկա- կան էին՝ հիմնված քաղաքից 1—45 կմ հեռու:

Տեղիե-քաղաքի վիճակ: Օրդուից հարավ- արեմուտք, Կիրաստի գավտոակին սահմանա- մերձ այս վիճակում գանվում էին հայկական հե- տեխլ րնակավայրերը:

Պաասաւ-սու: Գանվում է Օրդուից 5 ժամ ա- րեելք՝ խճուղու մոտ, ուներ 25 տուն հայ րնակ- լուկյուն:

Օզ-գաւա: Կիրաստի գավտակին սահմա- նակից գյուղ, 46 տուն րնակլուկյամբ: Ուներին փայտաշեն դպրոց և եկեղեցի:

Խալմեք: Օրդուից 3,5 ժամվա ճանապարհ հարավ-արեելք՝ երկու ժամ Օրդու-Կիրաստի խը- ճուղով, ապա 1,5 ժամ ղեպի լեռները րարձրացող արահետով: Օրդուից մինչև Բաղմոնթ րուրը դու- ղերում թուրքեր էին րնակվում: Բաղմոնթում ապ- րում էր 25 տուն հայ մարարա: Գլխավոր զրադ- մունքը գաշամաշակուկյունն ու անասնապահու- թյունն էր:

Սաբիբադ: Բաղմոնթին սահմանակից գյուղ էր, Օրդուից 4 ժամվա ճանապարհ հարավ-արե- վելք, նույն երթուղու վրա, Մեղիք դետի արեելյան լեռնալանջերին: Ուներ 18 տուն հայ րնակլու- թյուն: մեծամասնությունը սեփական հողամաս ուներ: Գլխավոր զրադմունքը կաղնուաներն էին: Ջրաղվում էին նաե ծխախոտողոծությամբ, դաշ- տամշակությամբ, անասնապահությամբ: Մեղու պահում էին միայն սեփական կարիքները րա- վարարելու նպատակով: Ամեն աուն աճեցնում էր պտղատու ծառեր՝ տանձենի, խնձորենի և այլն: Տների շուրջ անպակաս էին ծվաղի ծառերը: Կա- նեփի մշակումը րուրը ընտանիքների անհրաժեշտ պահանջն էր, որից սաացված թելով կտավեղեն ու ալլ իրեր (թոկ, պարկ և այլն) էին պատրաս- տում:

Հողերը հիմնականում հերկում էին արոր-

ներով, հետագա մշակումը կաաարելով փե- տատներով: Հծկան անասունը եղն էր: Միայն որ- պես հեծկան ու րեռնակիր անասուն օգտադործում էին ձի:

Գյուղն ուներ փայտաշեն եկեղեցի ու դպրոց, որոնք սպասարկում էին նաե հարեան Բաղմոնթ, Թոքմաք-տյուղի և Թուփալ-ղեղ րնակավայրերին:

Թոքմաք-տյուղի: Մարիշուրից կես ժամ հա- րավ-արեելք, Օրդուից 4,5 ժամ հեռու գտնվող գյուղ, որտեղ ապրում էր 6 տուն հայ:

Թուփալ-ղեղ: Մարիշուրից մեկ ժամ հարավ- արեմուտք գտնվող հայարնակ գյուղ, 15 տուն րնակլուկյամբ, որոնց մի մասը մարարաններ էին: Ջրաղմունքները նույնն էին, ինչ Ասրիշուղ գյու- ղում:

Քիրեզ-աեբի վիճակ: Գտնվում է Օրդուի հարավարեելյան սարալանջերին, քաղաքից 3—8 ժամ հեռավորության վրա: Վիճակի վարչական կենտրոնը Քիրեզ-աեբ գյուղն էր: Այս վիճակի հայարնակ գյուղերն էին:

Ջոքաուլը՝ Օրդուից շուրջ 3 ժամ հեռու, մոտ 100 տուն թուրք և 65 տուն հայ րնակլուկյուն ու- նեցող գյուղ էր: Հայերի մեծամասնությունը րնակվում էր առանձին թաղերում և մեծ մասը մարարա էր: Գյուղն ուներ փայտաշեն եկեղեցի ու դպրոց: Ջրաղվում էին այդեղործությամբ (զըլ- խտվորապես կտղին), ծխախոտազողծությամբ, դաշտամշակությամբ, անասնարոծությամբ և հա- վարոծությամբ: Հողերը հերկում էին հիմնակա- նում արորով:

Ցաֆուշ-աիպին Օրդուից 4, Չոքսուից մեկ ժամ հարավ րնկած թուրքական գյուղ է, որի ա- ռանձին թաղում ապրում էր 17 տուն հայ՝ մեծա- մասնությունը մարարա:

Կապաֆ-թեփեն Օրդուից հինգ, Ցոքուշ-տի- պից մեկ ժամ հեռու գտնվող գյուղ է, րնակլու- թյունը խառը (թուրքեր՝ 45 տուն, հայեր՝ 22 տուն, մեծ մասը՝ մարարաններ):

Չաֆաշին հայարնակ գյուղ էր, Օրդուից 5 ժամ, Կապաք-թեփից մեկ ժամ հարավ-արե- մուտք, ուներ 35 տուն րնակլուկյուն, փայտա- կերտ դպրոց ու եկեղեցի:

Խալմեքին Չոմ-Բաշիից մեկ, Օրդուից 7 ժամ հեռու րնկած մեծ գյուղ էր, մեծամասնությունը թուրքեր: Հայերը 60 տուն էին, մեծամասնությու- նը՝ մարարաններ: Գյուղն ուներ փայտաշեն դպրոց և եկեղեցի:

Ցոքուշ-տիպի, Կապաք-թեփի, Չոմ-րաշի և Խոլանի գյուղերում րնակլուկյան զրադմունքները նույնն էին, ինչ Չոքսուում գյուղում:

Քիրեզ-աեբեն Օրդուից ութ, Խոլանից մեկ ժամ հեռու, դուտ հայարնակ մեծ գյուղ էր՝ 110

տունն ընակչութեամբ, որոնց շուրջ 60%-ը մարաբաններ էին: Հողը սև, հեշա մշակելի ու արգավանդ էր, որը հերկում էին արորով:

Բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահութիւնն էր, կաթնամշակութիւնը, դաշտամշակութիւնն ու մեղվաբուծութիւնն էին: Գլխավոր հացահատիկը եգիպտացորենն էր, որի շուրջ 75%-ը կաղմում էր շուտ հասնող աեսակը, և որին տեղացիք 40 օրակա էին անվանում:

Հետաքրքիր է, որ այս գյուղում պանիր պատրաստելու սովորութիւն չկար: Յուղն սառնում էին մածունից: Սեր հավաքելու համար կաթնատաշտեր չէին օգտագործում: Մածունից յուղ սառնալուց հետո, մնացած թանր եփում, քաթանե առպարկներով քամում, ապա դնում էին ծանր մամուլի տակ. ստացված շոռային զանգվածին չեֆելիէ էին անվանում, որն ուսում էին պինդ վիճակում կամ լուծում ջրով ու թանի փոխարեն օգտագործում:

Քիրեղ-աների ու Ասավածաժին փայտաշեն եկեղեցին կառուցվել է 1849 թ.:

Մինչև 1905 թ. գյուղը դպրոցի շէնք չի ունեցել: Նրեխաները սովորում էին մի ասն կից սենյակում: 1905 թ. համայնական ուժերով կառուցում են դպրոցի փայտաշեն, ընդարձակ շէնք:

Մուսա-Կրանը (Մուսե-Էրբ) Քիրեղ-տերերի արեւելից սահմանակից, Օրդուից 8 ժամվա ճանապարհ հեռու, հայաբնակ գյուղ էր, որն ուներ 27 առն բնակչութիւն, մեծամասնութիւնը՝ մարաբա:

Քյոֆեն-բելը Օրդուից 8 կմ հեռու, Քիրեղ-տերերից հարավ-արեւմուտք ընկած հայաբնակ գյուղ էր, 22 տուն բնակչութեամբ, որոնցից միայն 5—6 տուն սեփական հողամասեր ունեին:

Ս. Խաչ անունով փայտաշեն եկեղեցին հիմնվել էր 1819 թ.:

Քել-թեփն (Թեփն): Քիրեղ-տերերի հարավից սահմանակից այս գյուղում ապրում էր 20 առն հայ մարաբա: Ս. Լուսավորիչ փայտակերտ եկեղեցին հիմնվել էր 1814 թ.:

Չալմուքը Օրդուից 9 կմ հեռու, Քել-թեփնի սահմանակից հայաբնակ գյուղ էր, որի 25 առն բնակիչների մեծ մասը մարաբաններ էին:

Մուսա-Կրան, Քյոքներ-բել, Քել-թեփն և Չալմուքն դուրերի ընակչության զբաղմունքներն ու վարելահողերը մշակելու եղանակները նույնն էին, ինչ Քիրեղ-տերի գյուղում:

Չալմուքլարի վիճակի գյուղերը գտնվում էին Բոքլի գետի աջ և ձախ լեռնալանջերին:

Գուր-Շերեն գյուղի սահմանն սկսվում էր Օրդու քաղաքի արեւելյան կողմից: Բնակիչների մեծամասնութիւնը թուրքացած վրացիներ էին,

որոնք գաղթել էին Սև ծովի կովկասյան ափերից (Բաթումի շրջանից՝ 1760-ական թվականներին): Գյուղի հարավային՝ առանձին թաղում ապրում էր 28 առն հայ մարաբա, զբաղվում էին անասնապահութեամբ, կաթնամշակութեամբ, դաշտամշակութեամբ ու ծխախոտագործութեամբ:

Չալմուքլարը Օրդուից 2 ժամ հեռու, Գուր-Շերենի սահմանակից հայաբնակ գյուղ էր՝ 48 տուն բնակչութեամբ, մեծամասնութիւնը՝ մարաբաններ: Զբաղվում էին ծխախոտագործութեամբ: Գրլ-խավոր հացահատիկը եգիպտացորենն էր. համաեղ մշակում էին նաև բանջարեղեն: Կանեփի մշակումը բոլոր անասնութիւններում անհրաժեշտ պահանջ էր: Հողը մշակում էին արորով, լեխտրով, փեատտով: Վարելահողերը արգավանդ սեահողեր էին:

Փայաշեն ու Լուսավորիչ եկեղեցին հիմնվել էր 1814 թ.:

Ունեին փայտաշեն վարժարան՝ վեցամյա դասընթացով: Սղջիկները դպրոց հաճախել սկսել էին վերջին ասորիներին:

Գույա-Բյոյը Չալմուքլարին սահմանակից, Օրդուից երեք ժամվա ճանապարհ հեռու հայաբնակ գյուղ էր, որանց ապրում էին 18 առն հայ մարաբաններ:

Սեւրցոց-գեղը Չալմուքլարի դուրախմարում հայաբնակ փոքր գյուղ էր, որն ուներ 25 առն բնակչութիւն և ասորական վարժարան:

Ալաշա-աղաջ (Ալաշա-աղու): Չալմուքլարին արեւմուտքից սահմանակից գյուղ: Ունեւ 26 առն հայ բնակչութիւն, որոնցից մի քանիսը սեփական հողամասեր ունեին: Գյուղի ու Լուսավորիչ փայտաշեն եկեղեցին հիմնվել էր 1864 թ.: Ունեին չորսամյա վարժատուն:

Յոնուգ-Բյոյը Չալմուքլարի արեւելքում հայաբնակ փոքր գյուղ էր, ուր ապրում էին 15 առն հայ մարաբաններ:

Գրգըլ-ճիսար: Յոնուգ-բյոյից մեկ ժամ հարավ, լեռնային գյուղ, որանց ապրում էր 25 առն հայ՝ մեծամասնութիւնը մարաբաններ:

Դերելի (Թեյնելի) Յոնուգ-բյոյին հարավ-արեւմուտքից սահմանակից, 20 անից ընդհանրացած հայաբնակ գյուղ էր, որանց մեծ մասը մարաբաններ էին:

Գուրալու: Դերելիին սահմանակից, Օրդուից 4,5 ժամ հեռու այս գյուղում ապրող 45 առն հայերի մեծ մասը սեփական հողամասերի աեր էր: Գյուղն ուներ փայտաշեն դպրոց ու եկեղեցի:

Լիւն-Բյոյ գյուղը գտնվում էր Գորալուի արեւմուտքում, որանց աղրող 13 առն հայերի մեծամասնութիւնը մարաբաններ էին:

Չալմուքլարի վիճակի բոլոր գյուղերում, հողի

մշակման եղանակներն ու ղրաղմունքները նույնն էին:

Մեքսիկի վիճակ: Այդ կոչումն ստացել է Օրգու գավառակի կենտրոնում (թուրքերեն՝ մեքսիկա) դանվելու հանձնաքով: Իտալական կենտրոնը (միդուրանիստը) Մայաչի գյուղն էր, որի պատճառով այն շատերին հայտնի էր նաև Սալաչի գյուղախումբ (վիճակ) անունով: Վիճակի սահմանն սկսվում էր Օրգուից 4 ժամ հարավ-արեելք ընկած Աք-յաղի գյուղից ու հասնում Ան-րաստիայի նահանգի սահմանին (Օրգուից շուրջ 9 ժամ): Վիճակի մակերևույթը հարուստ է անտառածածկ լեռներով (հասկապես հարավում), սարահարթերով ու պտղակենրով: Իտալահողերն արգավանգ են ու հեշտ մշակելի: Վիճակի հայա-րենակ գյուղերն ու թաղերը հանելալեն են:

Աք-յաղի: Օրգուից այսանդ երթուղին անցնում էր Բոքի-տերեի կամուրջից, ապա թեքվում հարավ՝ Չավուշար, Թենեի (մեծ գյուղ) և Տե-րեի գյուղերի միջով: Աք-յաղի և Տե-րեի գյուղերի միջով հոսում էր Տե-րեի գետը: Աք-յաղին Օրգու-ին մոտակա ամենաբարձրամարդ հայտնակ գյուղն էր: Գյուղում բնակվում էր շուրջ 80 տուն հայ, 30 տուն թուրք: Հայերի ղեկավար մասը սեփական հողամասերի տեր էր: Գյուղատնտեսության զբաղվողը ճյուղերն էին այգեգործություն (կաղ-նուտ) ու ծխախոտագործությունը: Հացահատիկ-ներից առաջնությունը տրվում էր եգիպտացորենին, որին համատեղ նույն հողամասում մշակում էին նաև տնտեսությունն անհրաժեշտ բան-ջարեղենն ու ընդդեմը: Ցանում էին նաև գարի, հաճար, Անփական կարիքները բավարարելու սահմաններում ղրաղվում էին նաև անասնապահ-հոսքամբ, կաթնամշակությամբ ու կտնեփի մը-շակմամբ:

Հողերը վարում, մշակում էին արորով, լեխ-արով ու փնատում: Այսանդ և Օրգուի մի շարք գյուղերում աարածված էր լեխարի ավելի պարզ-ձեռ, որը հայտնի էր թեթե (թեթիլ) կամ Օր-դուի լեխար անունով: Տեղացիների վկայությամբ, Աք-յաղից արեմուտք լեխար գործածողները եղակի էին:

Աք-յաղիի հայերն ունեին վեցամյա դպրոց և եկեղեցի՝ երկուսն էլ փայտաշեն: Աղջիկները ուսումնարան սկսել էին հաճախել միայն վերջին տարիներին:

Զորքը Աք-յաղիից մի ժամ հարավ ընկած հայաբնակ գյուղ էր: 55 տուն բնակչությամբ՝ մեծ մասը մտարաներ: Զրաղմունքներն ու աշ-խատանքի եղանակները նույնն էին, ինչ որ Աք-յաղիում:

Գյուղում կար փայտաշեն եկեղեցի և վեց-ամյա դպրոց:

Զրմըլին Զորքից արեելքից սահմանակից հայաբնակ փոքր գյուղ էր՝ 16 տուն բնակչությամբ: մշակութային կյանքով Զորքից քիչ անբաժան մասն էր:

Սալաչին (Սալաչի) Օրգուից 4,5, Աք-յաղից 1,5 ժամվա ճանապարհ հարավ ընկած հայաբնակ մեծ գյուղ էր: Գյուղն ուներ շուրջ 105 տուն բնակ-չություն: Զգալի տոկոս էին կազմում սեփական հողամասեր ունեցողները:

Այստեղ էլ բնակչության ղրաղմունքներն ու երկրագործական գործիքները նույնն էին, ինչ որ Աք-յաղիում:

Գյուղի ս. Աստվածածին փայտաշեն եկեղեցին հիմնվել էր 1854 թվականին:

Ունեին թեև փայտաշեն, սակայն բարեկարգ դպրոց:

Գառնեճուղը Ասլաչիին արեմուտքից հարե-վան հայաբնակ գյուղ էր, որն ուներ 64 տուն բնակչություն, որի շուրջ 80%-ը սեփական հո-ղամաս ուներ: Գրեթե բոլոր տնտեսությունների ղլխավոր ղրաղմունքը կաղնու այգիների մշա-կումն էր: Պտղատու ծառերից մշակում էին նաև խնձորենի, տանձենի, կեռասենի և այլն: Թուֆն այսանդ չէր հասունանում: Հիմնական հացահա-տիկը եգիպտացորենն էր. որպես ղլղարացու կամ, ինչպես ասում էին՝ «բերունիթի» համար ցա-նում էին նաև ցորեն, գարի, հաճար: Բանջարե-ղեն (րոնջար, բողկ, շաղգամ) ու լորի առատորեն ստացվում էր եգիպտացորենի արտերում, ղղում՝ արաբի եզրերին: Գետնախնձորով ու կարտոֆի-լով (կոստիլ) ղրաղեցված հողամասերում սերմա-ցում նորոգում էին 3—4 աարին մեկ անգամ: Կա-նեփը մշակում էին ոչ միայն սեփական կարիք-ների, այլ նաև վաճառելու համար: Զարգացած էր անասնապահությունը (կով, ոչխար). կային 500—1500 ոչխար ունեցողներ: Հարգված ու եկա-մրաարեր ղրաղմունք էր մեղվարածությունը: Կային 50—200 փռիֆ (մեղվի փեթակ) ունեցող-ներ, որոնք ստացած մեղրի մի մասը շուկա էին հանում:

Երկրագործական հիմնական գործիքներն էին արորը, լեխարը, փնատարը:

Գյուղն ուներ փայտաշեն եկեղեցի և բարե-կարգ դպրոց:

Զիբուլուղը գտնվում էր Ասլաչիի արևմուտ-քում և ուներ 26 տուն հայ բնակչություն: Հողա-կլիմայական պայմաններն ու ղրաղմունքները նույնն էին, ինչ հարևան՝ Գառնեճուղ գյուղում:

Գյուղն ուներ քառամյա դպրոց ու եկեղեցի (երկուսն էլ փայտաշեն):

Աճմեա-վազը հայարնակ գլուղը գանձում է Զիբուրլուղի հարավ-արեմուտքում. ունեւ 22 ոտն ընակչութիւն, մեծ մասը՝ մարաբաներու Զիբուրլուղն ու Աճմեա-վազը Օրդուից 4,5 ժամ հեռավորութեան վրա էին: Գլուղի աղբյուրի վազը (աշվա-գանը) Աճմեա անունով մեկն էր շինել, որի անունով էլ կոչվում է գլուղը: Զբաղմունքները նույնըն էին, ինչ նախորդ երկու գլուղներում:

Էրինճուղ: Զիբուրլուղից կես ժամ հարավ, հայաբնակ լեռնային գլուղ, 45 առն ընակչութեամբ, բոլորը Ավախայան աղգաառհմից. մեծամասնութիւնը մարաբաններ էին:

Գլուղն ունեւ քառամյա փայաաշեն դպրոց: Էլուկքեկ-կրաւ: Լեռնային գլուղ էրինճուղի արեւելքում. ունեւ 26 առն հայ ընակչութիւն, որի մի մասը սեփական հողամասի աւեր էր:

Էրինճուղում ե. էլուրեկ-կրանում կադինի մշակումը նոր էր աւարածվում: Գլուղաւանանսութեան առաջնակարգ ճուղները անասնապահութիւնը, կաթնամշակութիւնն ու դաշաամշակութիւնըն (հիմնականում եգիպաացորենն) էին: Հաշվաբոծութիւնը, ինչպես ամենուր, այստեղ ես արեւանսութեան անրածան մասն էր կաղմում: Լայնորեն աւարածված էր եգիպաացորենի և կանեփի մշակութիւնը, որոնց մեծ մասը վաճառքի էին հանում: Մեղվարութեամբ հողում էին դրսաւորապես ընաանիթի պահանջը:

Կուգ-Ֆյոյի (րառացի՝ Մմսկ գյուղ) դրաւնրվում է Օրդուից 6, էրինճուղից մեկ ժամվա ճանապարհ գեպի հարավ: Լեռների դողում ծվարած այս գլուղն ունեւ 10 առն ընակչութիւն՝ բոլորը մարաբաններ. դրսաւոր դրադմունքներն էին անասնապահութիւնն ու գաշաամշակութիւնը:

Բուլքոն: Էրինճուղից մեկ ժամվա ճանապարհ հարավ-արեւելք ընկած Թուրքական գլուղ է, շուրջ 70 առն ընակչութեամբ, որից րացի առանձին թաղում ապրում էին նաեւ 24 առն հայ մարաբաններ: Զրաղվում էին անասնապահութեամբ, կաթնամշակութեամբ, դաշաամշակութեամբ:

Գլուղն ունեւ աարական վարժաառն: Կլունաւուղի: Բուլքոնից մեկ ու կես ժամ հարավ, Օրդուից 7,5—8 ժամվա ճանապարհ հեռու, բարձր լեռնային հայաբնակ գլուղ, որաեղ ապրում էին 12 առն հայ մարաբաններ:

Չոնկալ-բել: Կլունաւուղիին սահմանակից, գեպի հարավ ընկած այս լեռնային գլուղում ապրում էին 10 առն հայ մարաբաններ:

Խոջ-օղլի: Օրդուից մինչեւ այստեղ 8 ժամվա ճանապարհ է, որաեղ ապրող 50 առն հայ ընակչութեան մեծ մասը մարաբաններ էին: Գլսաւորը գբաղմունքը անասնապահութիւնն ու դաշաամշակութիւնն էր: Կանեփը մշակում էին ինչպես սե-

փական կարիքներ, այնպես էլ վաճառելու համար: Արաերի մեծ մասը աշագախառն սեահողեր էին ու բերքառաաւ Հերկը կաաարում էին արորով, մասսամբ լեխարով, իսկ ցանքսը՝ արորով ու փեաաաով:

Խոջ-օղլիի ս. Թորոս եկեղեցին հիմնվել է 1853 թ.: Շենքը փայաաշեն էր: Գլուղն ունեւ վեցամյա դպրոց: Աղջիկները դպրոց էին հաճախում, Խոջ-օղլի գլուղը մոաակա հայկական գլուղերի աղգային-մշակութային կենաընն էր:

Գլոգ-էորեն (Կուլջ-ուրեն): Խոջ-օղլիից մի ժամվա ճանապարհ հարավ, հեռավոր լեռնային գլուղ, ուր ապրում էր 46 առն հայ, մեծ մասը՝ մարաբաններ: Զրաղվում էին անասնապահութեամբ ու կաթնամշակութեամբ:

Գլուղի փայաաշեն ս. Ասաւածածին եկեղեցին հիմնվել է 1869 թ.:

Ունեին փայաակերա դպրոց, քառամյա դասընթացով:

Խոջ-կելուր՝ Գլոգ-էորենին հարավից սահմանակից, 20 առն ընակչութեամբ հայաբնակ գլուղ:

Սալլաթ: Սերասախայի նահանգին սահմանամերձ այս գլուղում ապրում էր 20 առն հայ, որոնց մի մասը սեփական անանսութեան աւեր էր: Գլուղն ունեւ փայաաշեն դպրոց՝ չորս ասրվա դասընթացով:

Գաւա-կյոգ: Սալլաթի արեւելքում հայաբնակ փոքր գլուղ, որաեղ ապրում էին 12 առն հայ մարաբաններ:

Կոշալի: Սալլաթի հարավ-արեմուտքում դրանրվող այս գլուղում ընակվում էր 34 առն հայ, մեծամասնութիւնը մարաբաններ:

Յազլու (րառացի՝ Ամաւսնոց): Սալլաթից հարավ-արեւելք սահմանադրային փոքր գլուղ, ուր ապրում էին 18 առն հայ մարաբաններ:

Սյս հեռավոր լեռնային գլուղներում (Խոջ-կելուր, Սալլաթ, Գաւա-կյող, Կոշալի, Յազլու) դրսաւոր գբաղմունքն ու եկամաի աղբյուրը անասնապահութիւնն ու կաթնամշակութիւնն էին: Դաշաամշակութեամբ, հաշվաբոծութեամբ, բանջարաբոծութեամբ դրաղվում էին սեփական կարիքները հողալու համար: Տարածված ու եկամաարեր գրաղմունք էր մեղվարութիւնը: Սաացված որակյալ մեղրի՝ գգալի մասն ու մեղրամոմը վաճառում էին: Կանեփի մշակումը բոլոր արեւանսութիւնների անհրաժեշա գրաղմունքն էր:

Բաշ-չաւուաղի վիճակի գլուղները դրսաւում են Մեւթ դեաի վերին՝ հարավարեւելյան լեռնային շրջանները՝ Օրդուից 10 ժամ հեռու ընկած Կրմա գլուղից մինչեւ Սերասախայի նահանգի սահմանները: Օրդուից Կրմա երթուղին անցնում էր Գուլջերեն, էոքելի, Յաւաղլի, Չաւուշլար, Պահաառն,

Սևուկ, Ուղուն-Մահմաա, Լազրելի մահմեդական վրացիների ու թուրքական պուղերի միջով: Այս պուղախմբի հայարնակ գլուղերը հետևաբաններն էին:

Կրմա գլուղում ապրող 15 առն հայերը ընտրվել էին մարաբաններ էին: Գլուղաստանստիթյան ճյուղերն ու ղաշաավայրերը մշակելու եղանակները համարյա նույնն էին, ինչ խոշ-օզլի գլուղում: Ա. Գեորգ եկեղեցին կառուցվել է 1869 թ.: Գլուղն ուներ քառամյա դպրոց:

Էֆլադ-էռեներ գանվում է Կրմայի հյուսիս-արեելյան կողմում: Այստեղ բնակվում էին 23 առն համշենահայ մարաբաններ: Աղդային-մշակութային կյանքով Կրմա գլուղի անբաժան մասն էր:

Գրգ-լիմանը Կրմային հարավից սահմանակից հայարնակ գլուղ էր՝ 18 առն բնակչությամբ, որոնցից չորսն ուներ սեփական հողամաս:

Կալա-տիպի: Կրմայից մեկ ժամվա ճանապարհ հարավ՝ հայարնակ լեռնային գլուղ: Ուներ 35 առն բնակչություն՝ մեծամասնությունը մարաբաններ:

Չաթաղ: Կալա-տիպիի հարավ-արեելքում պանվող հայարնակ գլուղ, որն ուներ 30 առն հայ բնակչություն: Մի մասը սեփական անասնություն ուներ:

Գլուղն ուներ փայաաշեն դպրոց:

Չամուրլին գանվում է Չաթաղից մի ժամվա ճանապարհ հեռու: այս գլուղին իրարից անշաղկապ էին անասնածածկ լեռներով: Գլուղում ապրում էին 28 առն հայ մարաբաններ:

Բաշ-չաթաղ: Սերաստիայի նահանգին սահմանամերձ հայարնակ գլուղ: Ուներ 46 առն բնակչություն, որի մեծ մասը սեփական անասնություն ուներ: Գլուղն ուներ փայաաշեն դպրոց և եկեղեցի:

Լադ-ընլի: Բաշ-չաթաղին հարեան հայաբնակ փոքր գլուղ՝ 10 առն բնակչությամբ:

Գաշ-աղըղ (Գաշա-աղըղ): Բաշ-չաթաղից մեկ ժամվա ճանապարհ հարավ-արևմուտք և նրան սահմանամերձ լեռնային գլուղ, որտեղ բնակվում էին 12 առն հայ մարաբաններ:

Տոնձ-գյոլ (Տուղ-գյոլ): Բաշ-չաթաղից մեկ ժամվա ճանապարհ հարավ-արեելք, սահմանամերձ հայարնակ գլուղ: Ուներ 28 առն բնակչություն, որոնցից մի քանիսը սեփական հողամաս ուներ:

Վերոհիշյալ Կալա-տիպի, Չաթաղ, Չամուրլի, Բաշ-չաթաղ, Գաշ-աղըղ, Տոնձ-գյոլ գլուղերի բնակչության զխավոր զբաղմունքը անասնապահությունն է (կով, ոչխար) ու կաթնամշակությունն էին:

Չովաշի վիճակը գտնվում է Մելիք գետի վերին հասանքի հարավարևմտյան լեռնաշխարհում՝ Տեղերմեն-աերե գլուղից մինչև Չովաշ գլուղը (Սերաստիայի նահանգի սահմանը), որը վիճակի վարչական կենտրոնն էր: Վիճակում հիմնված հայարնակ գլուղներն էին:

Տեղերմեն-աերե: Օրգուից մինչև Տեղերմեն-աերե 9 ժամվա ճանապարհի անցնում էր Բյենլի, Աթ-յադի, Ուղուն-Մահմաա, Գալա-տիպի գլուղերի միջով: Գլուղում ապրում էին 12 առն հայ մարաբաններ:

Շըխլար: Տեղերմեն-աերեից մեկ ժամվա ճանապարհ հարավ: Այստեղի 18 առն հայերի մեծամասնությունը սեփական հող ուներ:

Կաթըր-Քյոյի: Շըխլարից մեկ ժամվա ճանապարհ հեռու: 15 առն հայ բնակչությամբ գլուղ՝ մեծամասնությունը մարաբաններ:

Փամբուլուղ: Օրգուից 10 ժամվա ճանապարհ հեռու, Կաթըր-Քյոյից արևմուտք բնակած գեղանիսա գլուղ: Ուներ 38 առն հայ բնակչություն, որոնցից շատերը սեփական հողի ու անասնության անը էին:

Գլուղում կար փայաաշեն դպրոց ու եկեղեցի: Քյոնուրնի: Փամբուլուղից հարավ-արևմուտք բնակած 20 առն հայ բնակչությամբ փոքր գլուղ:

Ֆոտոնա: Քյոնուրնից մեկ ժամ հարավ գանվող գլուղ, որտեղ բնակվում էին 12 առն հայ մարաբաններ:

Տոլեյթում: Ֆոտոնայից մեկ ժամ հարավ, Օրգուից 12 ժամվա ճանապարհ հեռու գլուղ, որն ուներ 12 առն հայ բնակչություն:

Չովաշ: Օրգուից 13 ժամ հեռու, Տոլեյթումից մեկ ժամ հարավ, Սերաստիայի նահանգին սահմանամերձ գլուղ: Այստեղ ապրող 82 առն հայերի մեծ մասը սեփական անասնություն ուներ:

Գլուղում կային բարեկարգ փայաակերթ 6-ամյա դպրոց ու եկեղեցի:

Շըջանի հարավային գլուղերում (Տեղերմեն-աերե, Շըխլար, Կաթըր-Քյոյի, Փամբուլուղ, Քյոնուրնի) արագ թափով ապրածվում էր կաղիների մշակությունը, որն արգեն հիմնավոր անը էր գրավել անասնության մեջ: Բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, ինչպես նաև՝ զաշաամշակությունը, հավարութունն ու մեղվարութունը: Մշակվող հացահատիկներից ամենաարածվածը եգիպտացորենն էր, որին համապատասխան մշակում էին նաև անհրաժեշտ բանջարեղեններ:

Շըջանի հարուստ էր նաև ղանաղան պտուղներով՝ առնուն (սալոր), աանձ, խնձոր, բալ և այլն:

Վարեւահողերը հիմնականում արորներով էին հերկում:

Բերշեմայեի վիլևակը գրավում էր Օրգուի գավառակի հարավարեւմտյան մասը: Վարչական կենտրոն Բերշեմայե ավանը գտնվում էր Օրգուից 7 կմ արեւմուտք՝ Հոնայի ծովախորշում: Մ. Բժրշկյանի համոզմամբ, Գոգիորա պատմական քաղաքն այս վայրերում է եղել:

Բերշեմայեն Օրգու գավառակի ամենարեւարձակ ու բազմամարդ գյուղախմբերից մեկն էր: Բնակչության մեծամասնությունը թուրքեր, մահմեդականացած վրացիներ, լաղեր ու չերքեզներ էին, որոնք դրավել էին ծովափնյա լավագույն հողամասերը:

Շրջանի հայերի շուրջ 80%-ը մարաբաներ էին, դուղերը՝ ցրված վիճակի դանադան մասերում: Շրջանում լայնորեն տարածված էր կանեփի մշակումը, որից առատ ու որակյալ բերք էին ստանում:

Բերշեմայե ավանում ապրող 22 առն հայերն գրավում էին արհեստներով ու առեւտրով:

Յավուզլար: Բերշեմայեից երեք ժամ հարավ-արեւելք հարմարավեա ու բերքառու հողամասերով հարուստ հայարնակ գյուղ: Ունի 15 առն բնակչություն, մեծամասնությունը՝ մարաբաններ: Գլխավոր ապրանքային մշակույթը կանեփն էր, որի մեծ մասը վաճառում էին: Զարգացած էր անասնապահությունն ու կաթնամշակությունը: Բացի եգիպտացորենից, որին համառելի աճեցնում էին նաեւ բանջարեղեն ու լոբի, մշակում էին նաեւ ցորեն, դարի, հաճար: Հավաքուծությունը բավարարում էր ոչ միայն բնականիքի ձվի պահանջը, այլեւ մասամբ ապահովում որակյալ մսեղենով: Քիչ անասնություններ կային, որոնք առնրվազն 5—10 մեղվի փեթակ շունենային: Կային նաեւ մասնադեա մեղվապահներ, որոնք ունեին 50—100 փորիք (փեթակ): Ինչպես համշենցիների մյուս գյուղերում, այստեղ եւ կանաչեղենի համար ամեն առն ունի ցանկապատված անուշ (անամեծ պարանդ), ուր տարին ընդ անպակաս էր պտասն ու ըռը (բազմացողուն սոխ): Վարեւահողերը հիմնականում հերկում էին արորով:

Գյուղում կար փայաաշեն դպրոց ու եկեղեցի:

Պոգ-թեփեն գտնվում է Բերշեմայեի ու Օրգուի միջև և ունի շուրջ 45 առն հայ բնակչություն, մեծամասնությունը՝ մարաբաններ: Հայերն ունեին քառամյա փայաաշեն դպրոց:

Գարա-օլուֆ դուղը գտնվում է Բերշեմայեից 4 ժամ հեռու՝ լեռնալանջերին ու սարահարթերին ծվարած: Այստեղ ապրող 58 առն հայերի շնչին առկուսն ունի սեփական հող: Գյուղի դերակշռող

մեծամասնության ցրադուները անասնապահությունն (կով, ոչխար) ու կաթնամշակությունն էր: Գյուղաանասնապահ մնացյալ ճյուղերն ու հող հերկելու միջոցները համարյա նույնն էին, ինչ որ Յավուզլար գյուղում:

Գյուղն ունի փայաաշեն դպրոց ու եկեղեցի: Այսպիսե Գարա-օլուֆին սահմանակից փոքր գյուղ էր, 12 առն հայ բնակչությամբ, բոլորն էլ վարձակալ-մարաբաններ: Մշակութային-աղդային կյանքով սերտորեն կապված էին Գարա-օլուֆի բնակչության հետ:

Էսեֆյուֆ: Գարա-օլուֆից հարավ-արեւելք ընկած հայարնակ (14 առն) գյուղ: Այս և նախորդ գյուղն անցյալում Գարա-օլուֆի թաղերն էին: Բնակչության բաղմանալու շնորհիվ այդ թաղերը վերածվել էին առանձին գյուղերի:

Աւուֆ (Էրյուֆ): Բերշեմայեից 6 ժամ հարավ-արեւելք հայարնակ դուղ, որի 50 առն հայ բնակչության մեծամասնությունը մարաբաններ էին: Բացի մեղվաբուծությունից, որն առաջնային տեղ էր գրավում այստեղ, գյուղաանասնություն մյուս ճյուղերը նույնն էին, ինչ որ Գարա-օլուֆում:

Գյուղում կային փայաաշեն դպրոց և եկեղեցի:

Կաղըի-Պուեն: Բերշեմայեից 8 ժամվա ճանապարհ հարավ-արեւելք ընկած հայարնակ այս գյուղում ապրող շուրջ 48 առն հայեր, շնչին բացառությամբ, մարաբաններ էին: Վարեւահողերը սեահող էին և բերքառատ: Հացահատիկներից առաջնությունը տրվում էր եգիպտացորենին: Գյուղաանասնության մեջ դերակշռող ճյուղերը անասնապահությունն (հիմնականում ոչխար և այծ) ու կաթնամշակությունն էին:

Գյուղի ս. Հակոբ եկեղեցին հիմնվել է 1863 թ.: Ունեին քարակերտ 6-ամյա դպրոց:


Դարբեջա-սաջլար (Դարբե-սաջի): Բերշեմայեից 6 ժամ հարավ-արեւմուտք ընկած հայարնակ դուղ, որն ունի 40 առն բնակչություն և, որի շուրջ 25%-ը սեփական անասնություն ունի:

Գյուղի ս. Ասեփանոս եկեղեցին հիմնվել է 1861 թ.: Գյուղն ունի փայաաշեն դպրոց՝ քառամյա դասընթացով:

*
*

Մոսավոր պաակերացում կաղմելու համար այն արհավիրքի ու մղձավանջային տարիների մասին, որ ապրեցին համշենահայերն ու պոնաահայերն, առհասարակ, հարկ ենք համարում լոկ մեկ դավառակի օրինակով՝ ընդհանուր դժեբով ու համառոտակի նկարագրելու այն աղեապի

True &c





վիճակը, որ ապրեցին Օրգուի շրջանի հայերն ստանձնապես:

Դեռևս XIX դ. երկրորդ կեսից սկսած Օրգու դավաճանում և հաակապես քաղաքում հաստատված համայնությանը մի խումբ, հետադարձելով հետադարձ լեռնային շրջանները, անցնում է Սեւ-րաստիա նահանգի սահմանը: Տեղի թուրք կալվածատերերը շահագրգիռական նպատակներով և «սիրտհոգա» ընդունում են հայերին իրենց անձայրածիր անտառածածկ ձյալվածները, որպես մարարաներ: Շատ շանցած, համայնահայերի տասնյակ ընտանիքներ փոխադրվում են Օրգուին ու Սամսունի սահմանակից նիքսար և Թոքատ դավաճանների մոտակա լեռնաշխարհը, մշակական կապ պահպանելով իրենց նախնիների անկախությունը մնացած հարազատների ու բարեկամների հետ:

Ավելի ուշ, 1860—1870-ական թվականներին Օրգու դավաճանից համայնահայերի պատկանելի մի զտնված գաղթում է հետադարձ Նիկոմեդիա՝ Լիվիթի և Պրուսայի գավառները:

Համարյա նույն ժամանակներից սկսվում է Օրգու գավառակի համայնահայերի դաղթ-փախուստը դեպի Ռուսաստանի կովկասյան մերձսեծովյան երկրամասերը:

Ինչպես Օրգու քաղաքի, այնպես էլ ողջ դավառակի հայ ընտանիքները 1895 թ. աղետալի օրերին փրկվեց շնորհիվ տեղի թուրք կառավարիչների ու զորապետների շրջահայաց ու վեհանձն վերաբերմունքի: Դրան մեծ չափով օգնեց նաև հայերի ու հարեան աղղիքի՝ մահմեդական վրացիների, չերքեզների, մասամբ՝ թուրքերի փոխադարձ բարեդրացիական հարաբերությունը:

Սակայն, զնալով, փոթորիկն ստանում էր ավելի թափ ու անկասելիություն, որը բռնագողթի անվան առկ պետք է վերածվեր աննախընթաց եղանակի:

Օրգուի հայերը բռնագողթի ենթարկվեցին Տրապիզոնի հետ միաժամանակ, 1915 թ. հունիս ամսին: Հինգ օր առաջ հայտարարվեց «աքսորի» օրը: Մուրթված ընկալությունը նախադրելով աղետը, խեղակորույս խուճապի մատնվեց: Ծղնածամային այդ օրերին հայ ղեկավարներն ու հեղինակավոր անձինք, հավատալով թուրք կառավարության վերադաս մարմինների խոստումներին, կուրորեն ենթարկվեցին պետական հրամանին: Ոչ ոք չէր հավատում, որ սա գրեթե վերջն է:

Հարեան դավաճանների՝ Ֆաթալի և Ունիեի հայերը հիշելով Համշենի ու Սեւ-դեռի ողբերգական օրերի ավանդապատմաները, նպատակահարմար պտան առերես ընդունելու մահմեդականությունը, միայն թե փրկվեն ընտանիքներից: Նրանք Հարու-

Յյուն էին. Օբոուլյանի ստորադրությամբ Օրգուի հայ ղեկավարությանը ես հեռագրում են, որ սրանք այդպես վարվեն:

Օրգուցիների խնդրանքը, սակայն կտրակա-նապես մերժվում է թուրքական իշխանությունների կողմից: Բռնագողթի նախընթաց օրերին Օրգու քաղաքում հավաքեցին ու բռնատրեքեցին տղամարդկանց, Մի քանի օր հետո նրանցից շատերին (շուրջ 80—100 հոգու), արյունոտ տղա հակախմբի հսկողությամբ, շուրս-շուրս շղթա-յակապ քաղաքից դուրս են հանում, հայտարարելով, որ իբր Մոսուլ են աքսորում, հետագայում պարզվեց, որ բոլորին սրախողողող են արել:

Առաջին հերթին «աքսորեցիներ» շարքից հանեցին քաղաքի անվանի մարդկանց ընտանիքներին, որոնց տղամարդկանց բանտարկել ու սպանել էին: Դրանից հետո, ամեն օր մեկնում էր թըշվառների հաջորդ կարավանը՝ շրջապատված ղինված թալանչի-բարբարոսներով: Դժբախտների հետիոտն թափուն անցնում է Մելեթ-Մեսուրիե (Համիաիե)՝ Սուլեհհերին ուղիով՝ մինչև Էլպերի, որը և դարձավ Օրգուի հայերի վերջին հանգրվանն ու սպանգավարը: Երեխաներից կենդանի են մնում միայն նրանք, որոնց վերցնում-փախցնում են շրջակայքի թուրք ընտանիքները: Թուրք բաշիբոզուկները առեանդում ու տանում են նաև հայ դեղեցկուհիներին ու ջահել հարսներին: Մնացյալները գաղանարար հոշոտվում, նահատակվում են մարդակերպ դաղանների ձեռքով⁴⁹:

Մքսորի նախօրյակին քաղմաթիվ երեխաների ծնողներից անջատեցին և մի քանի օր հետո նրանցից շահերին ջրահեղծ արեցին:

Այդ ահեղ օրերին բարյացկամ վերաբերմունք ցուցաբերեցին հայերի նկատմամբ վրացիները: Վրացի Չաքըր-Ահմեդ բեկին հաջողվում է բանտարկյալների վերջին խմբին՝ 50—60 հոգու վերցնել իր հսկողության տակ: Գրաստ է վստածում և իր ղինված ուժերով անվտանգ ու հանդիստ հասցնում Սերաստիա՝ Եփրատի ափը: Նա իր ապարանքում փրկում է նաև մի քանի հայ երեխաների: Վրացի Բալոլի Հյուսեին ու Բարա Չատե էֆենդիները հայրական հոգատարությամբ խնամեցին ու պահպանեցին բռնագողթի ենթարկված հայ բարեկամների երեխաներին և պահ թողած դանձերն ու դոհարեղենը:

Օրգու քաղաքի հետ միաժամանակ, սկսվեց գավառի հայերի «աքսոր»-ընտանիքները: Մուրթված ու անօղնական համշենահայ շինականների մեծ մասը, ուրիշ հույս ու ելք չունենալով, իրենց

⁴⁹ Առաջնություն (Հ. Հովսեփյան), Ել. աշխ., էջ 519—522:

Բախտը հանձնելով ճակատադրին, ստիպված ենթարկվեցին գահիճների նեղ հրամանին: Խաբված ժողովրդին՝ մեծ ու փոքրին, կորաքամակ ծերունուն և օրորոցի մանկիկին հավաքելով գյուղախմբի վարչական կենտրոնը, ոստիկանների և բանտերից աղաատած ոճրագործների «հսկողութեան» տակ զննեցին Մելքի ճամփով, վայրի քրոթիծաղով հուսադրելով, թե ադնում եք Մոսուլ, այնտեղ ձեզ կապահ խաղաղ ու ապահով կյանք:

Հայերին աքսորելու համար դուռը ներխուժած ենիշերները դուռացիներին անխղճորեն ծեծում էին, որպեսզի սրանք ցույց ասեն փախուսողականների ու դենքի ահը: Առանձնապես անողորմ էին այն անձանց հանդեպ, որոնցից հույս ունեին ոսկի շորթել: Օրինակ, Գաթրենուղ դուռի քահանա Տեր-Սահակ Վարդիկյանին ամբողջ մի օր սվինով ու դանակով խողեսողելով և մաս-մաս կարասելով ասնջամաճ արեցին: Զոհնեցին այնհեր ծերունու երգումներն ու ոսկի շունենալու հավաստումները:

Անուամենայնիվ, Օրդուի դավառակի դուռերից ու հենց Օրդու քաղաքից ասանյակ երիտասարդներ կտրականապես դեմ կանդնեցին բռնադադլին: Զհավաասով թուրք զոհեկավարներին նենդամեա երգումներին ու խոստումներին, նրանք բարձր համարեցին հայրենի լեռներում ապաստանելով՝ թշնամու դեմ ճակատ-ճակատի կռվին ու մեռնելը, քան թե թշնամու առաջ ծնկի գալը կամ ողորմածութուն ինդրելը:

Գոյամարներին մասնակցած վրիժառուներից ոմանք դարձան հայդուկային շարժման անձնավեր ու անվանի առաջնորդներ: Նրանցից շատերը արիաբար կռվելով նահանջեցին ու իրենց համար խաղաղ հանդրվան դտան Ռուսաստանի կովկասյան-մերձսևծովյան երկրամասերում:

1918 թ. աշնանը առաջին աշխարհամարտում թուրքիայի վերջնական պարտությունից հետո, եղեռնից փրկված հայ բեկորներն սկսեցին աստիճանաբար վերադառնալ իրենց երրեմի բնակավայրերը: Օրդու քաղաքում սահգծվեց որբախնամ հանձնախումբ ու իրենց համար խաղաղ հանդրվան դտան Ռուսաստանի կովկասյան-մերձսևծովյան երկրամասերում:

11. ՍԱՄՍՈՆԻ (ԶԱՆԻԿ) ԳԱՎԱՌ

Բերշեմպելով վերջանում էր նախկին Տրապիզոնի գավառի սահմանն ու սկսում Սամսոնի (Զանիկ) գավառը:

Գավառի ձաճիկ կռվելու մասին կան ասարբր րաքատրություններ ու ենթադրություններ, Ոմանք այդ անունը կապում են Վասպուրականի

Ուրահավաք խմբի անդամներ իրենց հետ վերցնելով լեռներում աղաաված համշենցի մի քանի երիտասարդների, շրջում էին շրջանի գյուղերում և հայտնաբերված բոլոր որբերին հավաքում որրանոց: Փոքրիկներից շատերը չէին հիշում ոչ ծնողների և ոչ էլ իրենց անունները: Տարակույս չկա, որ մեծ թվով մանկիկներ մնացին իրենց որդեգրող թուրքերի մոտ:

Ենուրհիվ ձեռք առնված դործուն միջոցների, կարճ ժամանակամիջոցում Օրդուի հայերի թիվը հասավ շուրջ 2000-ի:

Անհնար եղավ թուրքերի հետ ամուսնացած կանանց ու աղջիկների մեծ մասին եա վերցնել, քանի որ թուրք իշխանությունները ամեն կերպ խոչընդոտում էին այդ գործին:

Օրդուի վերածնված հայկական համայնքն րնարեց իր աղդային վերադաս մարմինը՝ Թաղական խորհուրդը, որը վերանորոգեց եկեղեցին ու դպրոցը:

Նդեռնից փրկված ասնջահար ու հյուծված իլյակներին բժշկական օգնություն ցույց աալու նպատակով, րացվեց դարմանատուն (զեղատուն):

Սակայն կարճաատ եղավ նորարողոջ համայնքի կյանքը: 1922—1923 թթ., երկրում աիրող նոր կարգերի հեռանդով, եղեռնից վերապրող իլյակներն սախաված եղան թողնել հայրենի երկիրն ու ցրվել ամբողջ աշխարհով մեկ: Քաղաքի րնակիչներից զգալի մի հասված զաղթեց Ֆրանսիա ու հաստատվեց Մարսել քաղաքում:

Գյուղացիների մեծամասնությունը դադլեց խորհրդային երկիր՝ Արխանդիա և Կրասնոդարի մարզ:

Որբանոցները փոխադրվեցին Պուլիս ու այլ երկրներ:

Ականաասների վկայությամբ, 1959 թ. Օրդուում բնակվում էր րնդամենը 250 հայ՝ առանց դպրոցի ու եկեղեցու: Ս. Ասավածածին եկեղեցին հիմնովին քանդվել էր, գերեզմանոցը գեանին հավասարվել: Սաացված վերջին կցկաուր անդեկությունների համաձայն, ներգալիս Օրդուում բնակվող սակավաթիվ հայերը թրքախոս են դարձել, սղդանունները ստիպված դարձրել թուրքական:

Զանիկի շրջանի հեա, ենթադրելով, թե անցյալում՝ պարսկա-արարական ախրապետության ժամանակ, Հայաստանից Պոնտոս դադթած հայերի մի հոծ դանդված հիմնվել է Սամսոնի շրջանում ու երկիրը անվանել Զանիկ: Ուրիշների կարծիքով, այդ անունը կապվում է պատմական Զանեթ (Կող-